ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

23 հոկտեմբերի, 2020 թվականի № 41-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵԲԵՐԻ 6-Ի № 50-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը և հաշվի առնելով հանրային հեռարձակողների գործադիր տնօրենների թափուր տեղերի համալրման համար մրցույթն առավել արդյունավետ անցկացնելու անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2010 թվականի սեպտեմբերի 6-ի № 50-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները.

1.1. Որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 2.14 կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրությամբ պայմանավորված մրցույթի անցկացմանը խոչընդոտող հանգամանքների ի հայտ գալու դեպքում հանձնաժողովի նախագահի որոշմամբ մրցույթը կարող է կասեցվել մինչև մրցույթի անցկացմանը խոչընդոտող հանգամանքների վերանալը: Սույն կարգով նախատեսված չլրացած բոլոր ժամկետների ընթացքը կասեցվում է մրցույթը կասեցնելու հետ միաժամանակ: Մրցույթը վերսկսվելու օրվանից սույն կարգով նախատեսված ժամկետների ընթացքը շարունակվում է: Մրցույթը վերսկսվում է հանձնաժողովի նախագահի որոշմամբ:»

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

23 հոկտեմբերի, 2020 թվականի

ք. Երևան